Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-371-13.09.2022-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ *ԼՐԱՑՈՒՄՆԵՐ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-164-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության «կառավարությունը» բառը փոխարինել «կրթության պետական կառավարման ***լիազոր*** մարմինը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Պետական եւ ոչ պետական արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձեւ»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության բնագավառում կառավարությունը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծում, վերակազմակերպում եւ լուծարում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները, ***որոշում է պետական մասնակցությամբ կամ մասնավոր հատվածի հետ համատեղ ուսումնական հաստատություն ստեղծելու հարցը:***

2) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը,

3) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձեւավորման եւ հաստատման կարգը,

4) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման կարգը,

5) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ***ոլորտների***, ուսուցման հիմքի եւ որակավորումների,

6) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների յուրաքանչյուր ուսումնական տարվա անվճար ուսուցմամբ (նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը՝ ըստ մասնագիտությունների,

7) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների նպատակային ուսուցման, այդ թվում Հայաստանի Հանրապետության սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի քաղաքացիների ընդունելության ու նրանց գործուղման կարգը,

8) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերի ***իրականացման*** լիցենզավորման կարգը,

9) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրման կարգը,

10) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության, այդ թվում՝

որակի ապահովման ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգը.

11) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ հատկացնելու, ուսման վարձը փոխհատուցելու եւ կրթաթոշակ սահմանելու կարգը,

12) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը,

13) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ***թափուր տեղի համալրման կարգը;***

14) հաստատում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը,

15) հաստատում է արհեստագործական կրթական ծրագրի անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցման) ձեւերով ուսուցման կարգը,

16) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) ձեւով ուսուցման կարգը,

17) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերի դրսեկության (էքստեռն) ձեւով ուսուցման կարգը,

18) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթերի ձեւերը,

19) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորված կամ տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության եւ հավելավճարի սահմանման կարգը,

20) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման բնագավառում կրթության պետական կառավարման ***լիազոր*** մարմինը՝

1) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները եւ որակավորումների բնութագրերը՝ ըստ մասնագիտությունների ու կրթական աստիճանների,

2) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը,

3) հաստատում է ուսանողների՝ մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը,

4) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող նախագծերի եւ ծրագրերի մշտադիտարկման եւ գնահատման կարգը,

5) իրականացնում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերի ***իրականացման*** լիցենզավորումը և տալիս ***թույլտվություն՝ յուրաքանչյուր որակավորման ծրագրի կազմակերպման համար,***

6) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության փորձնական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման կարգը,

7) հաստատում է մեկից ավելի արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը,

8) ***սահմանում է*** արհեստագործական կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության խորհուրդների ***(այսուհետ՝ խորհուրդ)*** ձեւավորմանը և ***հաստատման կարգը,***

9) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի ***(հավաստագրի) համար*** քննության կազմակերպման եւ հավաստագրման, հավաստագրման հանձնաժողովի կազմավորման եւ գործունեության կարգը,

10) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստող կազմակերպության ընտրության եւ դիմած անձի վերապատրաստման կարգը,

11) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսանողին ակադեմիական արձակուրդ տրամադրելու կարգը եւ ժամկետները,

12) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման եւ անցկացման կարգը,

13) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման հանձնաժողովների ձեւավորման, դրանց գործունեության եւ ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման եւ ատեստավորման կարգը,

14) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման հանձնաժողովների ձեւավորման, դրանց գործունեության եւ մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման կարգը,

15) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի բնութագրիչները եւ տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

16) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողներին վերապատրաստող ***կազմակերպություններին ներկայացվող պահանջները, երաշխավորում և հրապարակում կազմակերպությունների*** ցանկը,

17) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման ***ծրագրի ուղղությունները,***

18) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների բաղադրիչները,

19) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձեւաչափերը,

20) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների նախագիծ մշակող աշխատանքային խմբի ձեւավորման կարգը, արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության բնագավառի ոլորտային հանձնաժողովների ձեւավորման եւ գործունեության կարգը եւ փորձագիտական եզրակացությունների ձեւաչափերը,

21) հաստատում է ***հիմնական կրթության հիմքով արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերում միջնակարգ կրթության 3-րդ մակարդակի պետական բաղադրիչով սահմանված առարկաների նվազագույն ցանկն ու ծավալը,***

22) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը,

23) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների փորձարկման եւ ներդրման կարգը,

24) սահմանված կարգով և ձևով տրամադրում է ուսումնական հաստատության, այդ թվում՝ վերակազմակերպված կամ լուծարված, ավարտական փաստաթղթի կրկնօրինակ՝ արխիվային հիմքերի առկայության դեպքում,

25) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը,

26) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների «Տարվա լավագույններ» մրցույթի անվանակարգերը, ներկայացվող պահանջները եւ անցկացման կարգերը,

27) հաստատում է արհեստագործական եւ (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների «Լավագույն ուսանողներ» անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը, մրցույթի չափանիշները եւ մրցույթի մասնակցության հայտի ձեւը,

28) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթություն իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ուսանողներին եւ մանկավարժական աշխատողներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը,

29) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում կրեդիտային համակարգի ներդրման եւ գործարկման կարգը,

30) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը եւ հաստատում դրանց լրացման (գործածման) կարգերը,

31) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները եւ նորմատիվները,

32) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի

ներկայացվող պահանջները, արդյունավետության գնահատման ցուցանիշները, այդ ծրագրի կատարման մասին հաշվետվությունների ներկայացման կարգը,

33) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության համակարգի գործունեության մշտադիտարկման եւ գնահատման իրականացման կարգը,

34) իր իրավասությունների շրջանակում մշակում եւ հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման համակարգի գործունեությունը կանոնակարգող այլ իրավական ակտեր,

35) իրականացնում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 5. Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ուսումնական հաստատության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ)» բառերը փոխարինել «խորհուրդը» բառով:

Հոդված 6. Օրենքի 18.1-ին հոդվածի 17-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«17. Արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թեկնածուին խորհրդի կողմից կարող են տրվել հարցեր՝ իր կողմից խորհրդին ներկայացված ուսումնական հաստատության զարգացման հինգ տարվա ծրագրի շրջանակներում:»:

Հոդված 7. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի.

1. 8-րդ կետում «բարձրագույն» բառը փոխարինել «արհեստագործական եւ միջին մասնագիտական» բառերով:

2. 9-րդ կետից հետո լրացնել նոր 10-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«10) սահմանված կարգով օգտվելու տրանսպորտային ծառայությունների դիմաց հատկացվող փոխհատուցումից:»:

Հոդված 8. Ուժը կործրած ճանաչել Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հոդված 9. Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել նոր 5-ից 25-րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5. ***Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության համակարգի մանկավարժական աշխատողները իրավունք ունեն*** սահմանված կարգով օգտվելու տրանսպորտային ծառայությունների դիմաց հատկացվող փոխհատուցումից:

6. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանված կարգով իրականացվում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորում:

7. Մանկավարժական աշխատողը կարող է նաեւ իր նախաձեռնությամբ եւ իր միջոցներով վերապատրաստվել եւ դիմել ատեստավորման:

8. Յուրաքանչյուր տարի կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանված կարգին համապատասխան արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատության տնօրենը կազմում է ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների ցանկը եւ ներկայացնում կրթության պետական կառավարման լիազոր մարմնին:

9. Ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողը կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանված կարգով նախապես անցնում է վերապատրաստման դասընթաց՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած ***վերապատրաստման ծրագրի ուղղություններին համապատասխան***:

10. Միջնակարգ կրթության ***երրորդ աստիճանի*** կրթական ***ծրագրով սահմանված առարկայական ծրագիր դասավանդող դասախոսի ատեստավորումը և տարակարգի շնորհումը իրականացվում է*** «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված ուսուցչի ատեստավորման եւ տարակարգի շնորհման ընթացակարգով:

11. Ատեստավորման ենթակա չէ՝

1) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող դասախոսը կամ արտադրական ուսուցման վարպետը, եթե նա նման հայտ չի ներկայացրել.

2) հղի եւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող մանկավարժական աշխատողները, եթե նա նման հայտ չի ներկայացրել:

12. Հղի եւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող մանկավարժական աշխատողը ենթակա է ատեստավորման արձակուրդից վերադառնալուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտ չի ներկայացրել:

13. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաեւ ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվող մանկավարժական աշխատողը ենթակա է ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ չորսամսյա ժամկետում:

14. Ատեստավորման գործընթացում մանկավարժական աշխատողների՝ կառավարության սահմանած կարգով ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության եւ հավելավճարի սահմանման համար:

15. Ատեստավորման հանձնաժողովը մանկավարժական աշխատողի ատեստավորման արդյունքում կայացնում է որոշում՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ՝ չի համապատասխանում: Չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է մանկավարժական աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:

16. Ատեստավորված մանկավարժական աշխատողն իր նախաձեռնությամբ կարող է մասնակցել մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման գործընթացին՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատված կարգին համապատասխան:

17. Մանկավարժական աշխատողների տարակարգերը համապատասխանում են մանկավարժական աշխատողների մասնագիտական չափորոշիչներին, որոնք սահմանում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

18. Մանկավարժական աշխատողների կողմից հավաքագրվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափորոշիչները եւ նվազագույն չափաքանակը հաստատում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

19. Մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման հանձնաժողովը ***փաստաթղթերի ուսումնասիրության*** արդյունքով ընդունում է հետեւյալ որոշումներից մեկը.

1) ենթակա է համապատասխան տարակարգի շնորհման.

2) ենթակա չէ համապատասխան տարակարգի շնորհման:

20. Մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմին կամ դատական կարգով:

21. Մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման հանձնաժողովի որոշումը հիմք է կրթության պետական կառավարման մարմնի կողմից մանկավարժական աշխատողին համապատասխան տարակարգ շնորհելու եւ հավելավճար սահմանելու համար:

22. Արհեստագործական եւ միջին մասնագիտական ծրագիր իրականացնող հաստատության տարակարգ ստացած մանկավարժական աշխատողին տրվում է համապատասխան հավելավճար՝ կառավարության սահմանած կարգով:

23. Բողոքի առկայության դեպքում մանկավարժական աշխատողի տարակարգ շնորհելը հետաձգվում է մինչեւ վերջնական որոշում կայացնելը:

24. Տարակարգի համար տրվող հավելավճարը դադարեցվում է, եթե տվյալ մանկավարժական աշխատողը ատեստավորումից հետո զբաղեցրած պաշտոնին չի համապատասխանել:

25. Մեկ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունից այլ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություն տեղափոխվող մանկավարժական աշխատողի տարակարգը պահպանվում է:»:

Հոդված 10. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարի վեց ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մինչեւ նոր կարգերի հաստատումը, գործում են նախկին հաստատված կարգերը:

~~*Առաջին ընթերցում*~~

Կ-371-13.09.2022-ԳԿ-011/1 Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ~~ԼՐԱՑՈՒՄ~~ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-164-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության «կառավարությունը»

բառը փոխարինել «կրթության պետական կառավարման ~~լիազորված~~լիազոր մարմինը» բառերով:

Հոդված 2. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ ~~հետեւյալ բովանդակությամբ~~.

«1. Պետական եւ ոչ պետական արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձեւ»:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ~~՝ հետեւյալ բովանդակությամբ~~.

«1. Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության բնագավառում կառավարությունը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծում, վերակազմակերպում եւ լուծարում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները,

2) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը, ***որոշում է պետական մասնակցությամբ կամ մասնավոր հատվածի հետ համատեղ ուսումնական հաստատություն ստեղծելու հարցը:***

3) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձեւավորման եւ հաստատման կարգը,

4) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ~~պետական բյուջեից~~ ֆինանսավորման կարգը,

5) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ***ոլորտների,*** ուսուցման հիմքի~~, ձեւի, տեւողության~~ եւ որակավորումների,

~~6) հաստատում է Հայաստանի Հանրապետության արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների յուրաքանչյուր ուսումնական տարվա անվճար ուսուցմամբ (նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերի ձեւավորման եւ ըստ լիազորված մարմնի ենթակայությամբ գործող ուսումնական հաստատությունների հատկացման կարգը,~~

~~7~~6) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների յուրաքանչյուր ուսումնական տարվա անվճար ուսուցմամբ (նպաստի ձեւով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը՝ ըստ մասնագիտությունների,

~~8~~7) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների նպատակային ուսուցման, այդ թվում Հայաստանի Հանրապետության սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի քաղաքացիների ընդունելության ու նրանց գործուղման կարգը, ~~ինչպես նաեւ մասնագիտությունների ցանկը,~~

~~9~~8) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ~~գործունեության (կրթական~~ ծրագրերի ~~)~~իրականացման լիցենզավորման կարգը,

~~10~~9) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների ~~պետական~~ հավատարմագրման կարգը,

10) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության, այդ թվում՝ որակի ապահովման ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ու իրականացման կարգը.

11) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ հատկացնելու, ուսման վարձը փոխհատուցելու եւ կրթաթոշակ սահմանելու կարգը,

12) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը,

13) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ~~ընտրության կարգը~~ ***թափուր տեղի համալրման կարգը***

14) հաստատում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը,

15) հաստատում է արհեստագործական կրթական ծրագրի անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցման) ձեւերով ուսուցման կարգը,

16) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) ձեւով ուսուցման կարգը,

17) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերի դրսեկության (էքստեռն) ձեւով ուսուցման կարգը,

18) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթերի ձեւերը,

19) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորված կամ տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության եւ հավելավճարի սահմանման կարգը,

20) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ~~՝ հետեւյալ բովանդակությամբ~~.

«1. Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման բնագավառում կրթության պետական կառավարման ~~լիազորված~~լիազոր մարմինը՝

1) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները եւ որակավորումների բնութագրերը՝ ըստ մասնագիտությունների ու կրթական աստիճանների,

2) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ~~առկա եւ հեռակա ուսուցման ձեւերով~~ ընդունելության կարգը,

3) հաստատում է ուսանողների՝ մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը,

~~4) իրականացնում~~պատասխանատու ~~է վերահսկողություն արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարման,~~համապատասխան շրջանավարտների ~~ամփոփիչ ատեստավորման եւ նրանց պատրաստման որակի նկատմամբ,~~

~~5~~4) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող նախագծերի եւ ծրագրերի մշտադիտարկման եւ գնահատման կարգը,

~~6) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում որակի ապահովման ներքին համակարգերի գնահատման կարգը,~~

~~7~~5) իրականացնում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորումը, ~~ինչպես նաեւ~~ տալիս ~~է թույլտվություն՝~~ ***յուրաքանչյուր որակավորման ծրագրի կազմակերպման համար,***

~~ըստ մասնագիտությունների գործունեության թույլտվություն,~~

~~8~~6) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության փորձնական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման կարգը,

~~9~~7) հաստատում է մեկից ավելի արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը,

~~10~~8) սահմանում է արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ~~կանոնադրությամբ սահմանված կարգով աջակցում է արհեստագործական կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության~~ խորհուրդների (այսուհետ՝ խորհուրդ) ձեւավորմանը եւ ~~հաստատում ըստ գերատեսչական ենթակայության գործող պետական ուսումնական հաստատությունների կառավարմանհաստատում խորհուրդների կազմերը~~հաստատման կարգը,

~~11~~9) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար քննության կազմակերպման եւ հավաստագրման, հավաստագրման հանձնաժողովի կազմավորման եւ գործունեության կարգը,

~~12~~10) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստող կազմակերպության ընտրության եւ դիմած անձի վերապատրաստման կարգը,

~~13~~11) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսանողին ակադեմիական արձակուրդ տրամադրելու կարգը եւ ժամկետները,

~~14) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից ուսանողի հեռացման եւ ազատման, ինչպես նաեւ ուսումնառությունը անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգը,~~

~~15~~12) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման եւ անցկացման կարգը,

~~16~~13) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման հանձնաժողովների ձեւավորման, դրանց

գործունեության եւ ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման եւ ատեստավորման կարգը,

~~17~~14) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման հանձնաժողովների ձեւավորման, դրանց գործունեության եւ մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման կարգը,

~~18~~15) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի բնութագրիչները եւ տարակարգերի շնորհման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

~~19~~16) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողներին վերապատրաստող ***կազմակերպություններին ներկայացվող պահանջները, երաշխավորում և հրապարակում կազմակերպությունների*** ցանկը,

~~երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձեւավորման կարգը,~~

~~20~~17) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման ~~չափորոշիչը~~ծրագրի ուղղությունները,

~~21) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում կարճաժամկետ ուսուցման դասընթացների կազմակերպման եւ վկայականների տրամադրման կարգը,~~

~~22~~18) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների բաղադրիչները,

~~23)~~19 հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձեւաչափերը,

~~24~~20) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների նախագիծ մշակող աշխատանքային խմբի ձեւավորման կարգը, արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության բնագավառի ոլորտային հանձնաժողովների ձեւավորման եւ գործունեության կարգը եւ փորձագիտական եզրակացությունների ձեւաչափերը,

~~25) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում սովորողների ընթացիկ գնահատման, քննությունների ու ստուգարքների անցկացման եւ հաջորդ կուրս փոխադրման կարգը,~~

21) հաստատում է ***հիմնական կրթության հիմքով արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերում միջնակարգ կրթության 3-րդ մակարդակի պետական բաղադրիչով սահմանված առարկաների նվազագույն ցանկն ու ծավալը.***

~~26) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ընդհանուր հանրակրթական առարկաների երաշխավորվող օրինակելի ուսումնական պլանները,~~

~~27~~22) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը,

~~28~~23) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների փորձարկման եւ ներդրման կարգը,

24) սահմանված կարգով և ձևով տրամադրում է ուսումնական հաստատության, այդ թվում՝ վերակազմակերպված կամ լուծարված, ավարտական փաստաթղթի կրկնօրինակ՝ արխիվային հիմքերի առկայության դեպքում,

~~29) տրամադրում է լուծարված ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի կրկնօրինակը՝ արխիվային հիմքերի առկայության դեպքում,~~

~~30~~25) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների անվանակոչության կարգը,

~~31~~26) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների «Տարվա լավագույններ» մրցույթի անվանակարգերը, ներկայացվող պահանջները եւ անցկացման կարգերը,

~~32~~27) հաստատում է արհեստագործական եւ (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների «Լավագույն ուսանողներ» անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը, մրցույթի չափանիշները եւ մրցույթի մասնակցության հայտի ձեւը,

~~33~~28) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթություն իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ուսանողներին եւ մանկավարժական աշխատողներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը,

~~34~~29) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում կրեդիտային համակարգի ներդրման եւ գործարկման կարգը,

~~35~~30) սահմանում է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը եւ հաստատում դրանց լրացման (գործածման) կարգերը,

~~36~~31) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները եւ նորմատիվները,

~~37~~32) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության զարգացման ծրագրին ***ներկայացվող պահանջները, արդյունավետության գնահատման ցուցանիշները,*** ~~մշակման, հաստատման եւ~~ այդ ծրագրի կատարման մասին հաշվետվությունների ներկայացման կարգը,

~~38~~33) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության համակարգի գործունեության մշտադիտարկման եւ գնահատման իրականացման կարգը,

~~39~~34) իր իրավասությունների շրջանակում մշակում եւ հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման համակարգի գործունեությունը կանոնակարգող այլ իրավական ակտեր,

~~40~~35) իրականացնում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 5 Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ուսումնական հաստատության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ)» բառերը փոխարինել «խորհուրդը» բառով:

Հոդված 6. Օրենքի 18.1-~~րդ~~ին հոդվածի 17-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ ~~հետեւյալ բովանդակությամբ~~.

«17. Արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի թեկնածուին խորհրդի կողմից կարող են տրվել հարցեր՝ իր կողմից խորհրդին ներկայացված ուսումնական հաստատության զարգացման հինգ տարվա ծրագրի շրջանակներում:»:

Հոդված ~~6~~7. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի.

1. 8-րդ կետում «բարձրագույն» բառը փոխարինել «արհեստագործական եւ միջին մասնագիտական» բառերով:

2. 9-րդ կետից հետո լրացնել նոր 10-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«10) սահմանված կարգով օգտվելու տրանսպորտային ծառայությունների դիմաց հատկացվող փոխհատուցումից:»:

Հոդված ~~7~~8. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հոդված ~~8~~9. Օրենքի 22-րդ հոդվածը լրացնել նոր 5-ից 25-րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«5. ~~Սահմանված~~Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության համակարգի մանկավարժական աշխատողները իրավունք ունեն սահմանված կարգով օգտվելու տրանսպորտային ծառայությունների դիմաց հատկացվող փոխհատուցումից:

6. Զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանված կարգով իրականացվում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորում:

7. Մանկավարժական աշխատողը կարող է նաեւ իր նախաձեռնությամբ եւ իր միջոցներով վերապատրաստվել եւ դիմել ատեստավորման:

8. Յուրաքանչյուր տարի կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանված կարգին համապատասխան արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատության տնօրենը կազմում է ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների ցանկը եւ ներկայացնում կրթության պետական կառավարման լիազոր մարմնին:

9. Ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողը կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանված կարգով նախապես անցնում է վերապատրաստման դասընթաց՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած վերապատրաստման ~~չափորոշիչներին~~ ծրագրի ուղղություններին համապատասխան:

10. Միջնակարգ կրթության երրորդ աստիճանի հանրակրթական ~~երրորդ մակարդակին~~ծրագրով ***սահմանված առարկայական ծրագիր դասավանդող դասախոսի ատեստավորումը և տարակարգի շնորհումը իրականացվում է*** ~~համապատասխան առարկայական ծրագիր վարող դասախոսը կարող է ատեստավորվել եւ տարակարգ~~

~~ստանալ~~ «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված ուսուցչի ատեստավորման եւ տարակարգի շնորհման ընթացակարգով:

11. Ատեստավորման ենթակա չէ՝

1) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող դասախոսը կամ արտադրական ուսուցման վարպետը, եթե նա նման հայտ չի ներկայացրել.

2) հղի եւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող մանկավարժական աշխատողները, եթե նա նման հայտ չի ներկայացրել:

12. Հղի եւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող մանկավարժական աշխատողը ենթակա է ատեստավորման արձակուրդից վերադառնալուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտ չի ներկայացրել:

13. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաեւ ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվող մանկավարժական աշխատողը ենթակա է ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ չորսամսյա ժամկետում:

14. Ատեստավորման գործընթացում մանկավարժական աշխատողների՝ ~~Հայաստանի Հանրապետության~~ կառավարության սահմանած կարգով ցուցաբերած համապատասխան արդյունքը հիմք է մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության եւ հավելավճարի սահմանման համար:

15. Ատեստավորման հանձնաժողովը մանկավարժական աշխատողի ատեստավորման արդյունքում կայացնում է որոշում՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ՝ չի համապատասխանում: Չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է մանկավարժական աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:

16. Ատեստավորված մանկավարժական աշխատողն իր նախաձեռնությամբ կարող է մասնակցել մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման գործընթացին՝

կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատված կարգին համապատասխան:

~~16~~17. Մանկավարժական աշխատողների տարակարգերը համապատասխանում են մանկավարժական աշխատողների մասնագիտական չափորոշիչներին, որոնք սահմանում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը~~՝ հիմք ընդունելով մանկավարժական աշխատողների գիտելիքների, մանկավարժական աշխատանքային հմտությունների եւ ունակությունների ծավալը, ստեղծագործական-հետազոտական գործունեության արդյունավետությունը, մասնագիտական գործունեության ընթացքում ներդրած ուսումնամեթոդական կարողությունները, ցուցաբերած հանրային ակտիվությունը, իր ուսանողների արդյունքային ցուցանիշները, նոր ձեռք բերած կամ կատարելագործած փաստացի հմտությունները, մասնագիտական աշխատանքային ստաժը, մանկավարժական գործունեության որակական այլ ցուցանիշներ (ներառյալ՝ պարգեւատրումը, համապատասխան մրցույթների մասնակցությունը, մասնագիտական կատարելագործմանն ուղղված վերապատրաստումները եւ այլն)~~:

~~17~~18. Մանկավարժական աշխատողների կողմից հավաքագրվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափորոշիչները եւ նվազագույն չափաքանակը հաստատում է կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

~~18~~19. Մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման հանձնաժողովը ~~փաստաթղթային ատեստավորման~~ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքով ընդունում է հետեւյալ որոշումներից մեկը.

1) ենթակա է համապատասխան տարակարգի շնորհման.

2) ենթակա չէ համապատասխան տարակարգի շնորհման:

~~19~~20. Մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման հանձնաժողովի որոշումները կարող են բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմին կամ դատական կարգով:

~~20~~21. Մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման հանձնաժողովի որոշումը հիմք է կրթության պետական կառավարման մարմնի կողմից մանկավարժական աշխատողին համապատասխան տարակարգ շնորհելու եւ հավելավճար սահմանելու համար:

~~21. Ատեստավորման հանձնաժողովը մանկավարժական աշխատողի ատեստավորման արդյունքում կայացնում է որոշում՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ՝ չի համապատասխանում: Չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է մանկավարժական աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:~~

22. Արհեստագործական եւ միջին մասնագիտական ծրագիր իրականացնող հաստատության տարակարգ ստացած մանկավարժական աշխատողին տրվում է համապատասխան հավելավճար՝ ~~Հայաստանի Հանրապետության~~ կառավարության սահմանած կարգով:

23. Բողոքի առկայության դեպքում մանկավարժական աշխատողի տարակարգ շնորհելը հետաձգվում է մինչեւ վերջնական որոշում կայացնելը:

24. Տարակարգի համար տրվող հավելավճարը դադարեցվում է, եթե տվյալ մանկավարժական աշխատողը ատեստավորումից հետո զբաղեցրած պաշտոնին չի համապատասխանել:

25. Մեկ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունից այլ արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություն տեղափոխվող մանկավարժական աշխատողի տարակարգը պահպանվում է:»:

Հոդված ~~9.~~ 10. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարի վեց ամսվա ընթացքում:

3. Սույն ~~Օրենքի~~օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մինչեւ նոր կարգերի հաստատումը, գործում են նախկին հաստատված կարգերը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-371-13.09.2022-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	Վերնագիր	«ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	Հոդված 1-ին	«լիազորված» բառի փոխարեն լրացնել «լիազոր» բառը: ***Օրենքի նախագծում «լիազորված» բառը փոխարինվել է «լիազոր» բառով, մեկ միասնական ձևակերպման նպատակով***	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	Հոդված 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ	Հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
4	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 3-րդ, մաս 1-ին, կետ 1-ին	«հաստատությունները» բառից հետո լրացնել «, որոշում է պետական մասնակցությամբ կամ մասնավոր հատվածի հետ համատեղ ուսումնական հաստատություն ստեղծելու հարցը:».	Ընդունվել է	Ընդունվել է
5		Հոդված 3-րդ, մաս 1-ին, կետ 4-րդ	Հանել «պետական բյուջեից» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
6		Հոդված 3-րդ, մաս 1-ին, կետ 5-րդ	5) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ոլորտների, ուսուցման հիմքի եւ որակավորումների,	Ընդունվել է	Ընդունվել է
7		Հոդված 3-րդ, մաս 1-ին, կետ 6-րդ	Հանել , համապատասխանաբար հետընթաց համարակալումը փոխել	Ընդունվել է	Ընդունվել է

8		Հոդված 3-րդ, մաս 1-ին, կետ 8-րդ (9)	9) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգը,	Ընդունվել է	Ընդունվել է
9		Հոդված 3-րդ, մաս 1-ին,	Լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետ. 10) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության, այդ թվում՝ որակի ապահովման ներքին և արտաքին գնահատման չափանիշներն ո իրականացման կարգը.	Ընդունվել է	Ընդունվել է
10	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 3-րդ, մաս 1-ին, կետ 13-րդ	«ընտրության կարգը» բառերը փոխարինել «թափուր տեղի համալրման կարգը» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
11.	Կառավարություն	Հոդված 4-րդ	**1.** Նախագծի 4-րդ հոդվածով՝ Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 16-րդ հոդվածի 1-ին մասում «լիազորված» բառի փոխարեն լրացնել «լիազոր» բառը: **2.** 4-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «4) պատասխանատու է արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական կրթական չափորոշիչների պահանջների համապատասխան շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման եւ նրանց պատրաստման որակի նկատմամբ,»: ***Հաշվի առնելով, որ նախարարությունը վերահսկողություն գործառույթ չի իրականացնում, խմբագրվել և հստակեցվել է ձևակերպումը:*** **3.** 10-րդ կետը խմբագրել հետևյալ	ընդունվել է ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	ընդունվել Չի ընդունվել Համաձայնութ-յամբ հանվել է Չի ընդունվել Համաձայնութ-յամբ

			բովանդակությամբ՝ «10) արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով աջակցում է արհեստագործական կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության խորհուրդների (այսուհետ՝ խորհուրդ) ձեւավորմանը եւ ըստ գերատեսչական ենթակայության հաստատում խորհուրդների կազմերը,»: ***Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասից հանվել է (այսուհետ՝ խորհուրդ) բառերը և տեղափոխվել է գործող օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ, հաշվի առնելով, որ առաջինը նշված կետում է օգտագործվում «ուսումնական հաստատության խորհուրդ» բառերը:*** **4.** 21-րդ կետում՝ «կարճաժամկետ» բառից հետո լրացնել «ուսուցման» բառը: ***«կարճաժամկետ դասընթաց» բառերը փոխարինվել է «կարճաժամկետ ուսուցման դասընթաց» բառերով, որը սահմանված է «Կրթության մասին» օրենքում:***		հանվել է Չի ընդունվել, համաձայնութ յամբ հանվել է
12	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, 1-ին մաս , 2-րդ կետ	Հանել «առկա և հեռակա ուսուցման ձևերով» բառերը		
13	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, 1-ին մաս , 4-րդ և 6-րդ կետեր	Հանել (տես նաև կառավարության առաջարկը), համապատասխանաբար համարակալումը փոխել	Ընդունվել է	Ընդունվել է

14	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, նոր 6-րդ կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6)իրականացնում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորումը և տալիս թույլտվություն՝ յուրաքանչյուր որակավորման ծրագրի կազմակերպման համար,».	Ընդունվել է	Ընդունվել է
15	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, նոր 8-րդ կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8) սահմանում է արհեստագործական կամ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության խորհուրդների (այսուհետ՝ խորհուրդ) ձեւավորմանը և հաստատման կարգը,»	Ընդունվել է	Ընդունվել է
16	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, նոր 9-րդ կետ	«իրավունքի հավաստագրման» բառերը փոխարինել «իրավունքի (հավաստագրի) համար» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
17	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, նոր 14-րդ կետ	Հանել	Ընդունվել է	Ընդունվել է
18	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, նոր 16-րդ կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «16) հաստատում է արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողներին վերապատրաստող կազմակերպություններին ներկայացվող պահանջները, երաշխավորում և հրապարակում կազմակերպությունների ցանկը,	Ընդունվել է	Ընդունվել է
19	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, նոր 17-րդ կետ	«Վերապատրաստման չափորոշիչը» բառերը փոխարինել «վերապատրաստման ծրագրի ուղղությունները» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է

20	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, 21-րդ և 25-րդ կետերը	Հանել , համարակալումը համապատասխանաբար փոխել	Ընդունվել է	Ընդունվել է
21	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, նոր 21-րդ կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 21) հաստատում է հիմնական կրթության հիմքով արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերում միջնակարգ կրթության 3-ր մակարդակի պետական բաղադրիչով սահմանվա առարկաների նվազագույն ցանկն ու ծավալը,	Ընդունվել է	Ընդունվել է
22	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 4-րդ, նոր 24-րդ կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 24) սահմանված կարգով և ձևով տրամադրում է ուսումնական հաստատության, այդ թվում՝ վերակազմակերպված կամ լուծարված, ավարտական փաստաթղթի կրկնօրինակ՝ արխիվային հիմքերի առկայության դեպքում,	Ընդունվել է	Ընդունվել է
23		Հոդված 4-րդ, նոր 32-րդ կետ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 32) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի ներկայացվող պահանջները, արդյունավետության գնահատման ցուցանիշները, այդ ծրագրի կատարման մասին հաշվետվությունների ներկայացման կարգը,	Ընդունվել է	Ընդունվել է
		Հոդված 4-ից հետո լրացվող նոր 5-րդ հոդված	Լրացնել նոր 5-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 5 Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ուսումնական հաստատության խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ)» բառերը փոխարինել «խորհուրդը» բառով:» ***Նախագծի 18-րդ հոդվածի 1-ին մասից (այսուհետ՝ խորհուրդ) բառերի փոփոխության նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացնել նոր 5-րդ հոդված:*** ***Ըստ այդմ հոդվածների համարակալումը վերանայվել է:***	Ընդունվել է	Ընդունվել է

		Հոդված 8-րդ (լրամշակված 9-րդ)	**1.** Նախագծի 8-րդ (լրամշակված 9-րդ) հոդվածով Օրենքի 22-րդ հոդվածում լրացվող նոր՝ 5-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «5. Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության համակարգի մանկավարժական աշխատողները իրավունք ունեն սահմանված կարգով օգտվելու տրանսպորտային ծառայությունների դիմաց հատկացվող փոխհատուցումից:» ***Նախագծում լրացվել է «Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության համակարգի մանկավարժական աշխատողները» բառերը՝ հստակեցնելու համար թե ովքեր են օգտվելու տրանսպորտային ծառայությունների դիմաց հատկացվող փոխհատուցումից:*** **2.** 10-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «10. Միջնակարգ կրթության երրորդ աստիճանի հանրակրթական ծրագրի համապատասխան առարկայական ծրագիր վարող դասախոսը կարող է ատեստավորվել եւ տարակարգ ստանալ «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված ուսուցչի ատեստավորման եւ տարակարգի շնորհման ընթացակարգով»: ***Խմբագրվել և համապատասխանեց- վել է «Հանրակրթության մասին» օրենքով սահմանմանը:*** **3.** 14-րդ և 22-րդ մասերից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը, **4.** ***21-րդ մասի՝***	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Խմբագերվել է, Տես ներքևում Ընդունվել է

			«Ատեստավորման հանձնաժողովը մանկավարժական աշխատողի ատեստավորման արդյունքում կայացնում է որոշում՝ համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին կամ՝ չի համապատասխանում: Չհամապատասխանելու մասին որոշումը հիմք է մանկավարժական աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման համար:» ***սահմանումը, տեղափոխվել և համարակալվել է որպես նոր 15-րդ մաս, նպատակ ունենալով պահպանել «ատեստավորման» և «տարակարգի շնորհման» մասերի հաջորդականությունը:*** ***Փոփոխության արդյունքում փոխվել է մասերի համարակալումը:*** **5.** 18-րդ (լրամշակված 19-րդ) մասում «փաստաթղթային ատեստավորման» բառերի փոխարեն լրացնել «փաստաթղթերի ուսումնասիրության» բառերով: ***Մանկավարժական աշխատողներին տարակարգ շնորհվելու է փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, որը կիրառվում է նաև «Հանրակրթության մասին» օրենքում***		Ընդունվել է
	Պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նոր 9-րդ հոդված, 9-րդ մաս	Վերապատրաստման չափորոշիչներին բառերը փոխարինել «վերապատրաստման ծրագրի ուղղություններին» բառերով		
		Նոր 9-րդ հոդված,	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 10. Միջնակարգ կրթության երրորդ աստիճանի	Ընդունվել է	Ընդունվել է

		10-րդ մաս	կրթական ծրագրով սահմանված առարկայական ծրագիր դասավանդող դասախոսի ատեստավորումը և տարակարգի շնորհումը իրականացվում է «Հանրակրթության մասին» օրենքով սահմանված ուսուցչի ատեստավորման եւ տարակարգի շնորհման ընթացակարգով:		
		Նոր 9-րդ հոդված, 17-րդ մաս,	«լիազոր մարմինը» բառերից հետո հանել		